

Պատասխաններ
Աշխարհագրություն առարկայի օլիմպիադայի
մարզային փուլի – 2022-2023 ուս. տարի
11-12 դասարան

1. ա-ճիշտ; բ-սխալ; գ-սխալ; դ-սխալ (յուրաքանչյուրը՝ **0.25միավոր**)

2. ա-ճիշտ; բ-ճիշտ; գ-ճիշտ; դ-սխալ (յուրաքանչյուրը՝ **0.25միավոր**)

3. Պապուա Նոր Գվինեա

4. բ

5. ա - ձմռանը

բ. - ամռանը

6. ա. երկաթուղային տրանսպորտի համար՝

42.1մլն մարդ-կմ : 0.4մլն մարդ = **105.25կմ (0.5միավոր)**

օդային տրանսպորտի համար՝

416.4մլն մարդ-կմ : 2.4մլն մարդ = **173.5կմ (0.5միավոր)**

բ. 2497.5կմ : 111կմ = 22.5°

22.5°+44° = 66.5°

Հետևաբար սկզբնակետի կոորդինատներն են՝ **հս.լ.66.5°; արլ.ե.44° (0.5միավոր):**
Կոորդինատներից որևէ մեկը չգրելու կամ միայն լայնությունը/երկայնությունը չնշելու դեպքում՝
0.25միավոր:

$\alpha=90^\circ-(66.5^\circ-23.5^\circ) = 47^\circ$ (**0.5միավոր**)

7. ա. Հարավային Կորեա, Սինգապուր, Թայվան, Հոնկոնգ (յուր.՝ **0.25միավոր**)

բ. Արգել (Գյումուշ), Քանաքեռ, Շամբ, Տաթև (յուր.՝ **0.25միավոր**)

Եթե աշակերտը նշել է չորսից ավելի պատասխան, ցանկացած սխալ նշված պատասխանի դեպքում միավորը նվազեցնել 0.25-ով:

8. ա. Լա Պաս, Մեխիկո, Երևան, Ալեքսանդրիա

բ. Վրաստան, Իտալիա, Գերմանիա, Քաթար

Երկու դեպքում էլ յուրաքանչյուր դիրքում ճիշտ պատասխանը նշելու պարագայում աշակերտին շնորհել **0.25միավոր**:

9. ա. Էլ Նինյո տաք հոսանքն է առաջացնում նման փոփոխություններ (**0.5միավոր**): Էլ Նինյոյի առաջացմամբ Պերուական սառը հոսանքը թուլանում է և փոխարինվում Խաղաղ օվկիանոսի արևմուտքից տեղափոխված տաք ջրերով: Արդյունքում տեղումների գոտին ևս Խաղաղ օվկիանոսի արևմուտքից՝ այդ թվում Ավստրալական ափերի գոտուց հեռանում է արևելք, իսկ Հարավային Ամերիկայի արևմտյան ափերի մոտ տեղումները ակտիվանում են: (**0.5միավոր**) Եթե աշակերտը ներկայացնում է հոսանքների փոփոխության հետ կապված աշխարհագրականորեն գրագետ մեկնաբանություն՝ շնորհել 0.5միավոր: Եթե հոսանքների վերաբերյալ որևէ մեկնաբանություն չունի՝ Օմիավոր:

բ. Հիմնական պատճառներն են (յուրաքանչյուրը՝ **0.5միավոր**). 1) ազգի ծերացումը, ինչը հանգեցնում է աշխատունակ և ոչ աշխատունակ (կախյալ) բնակչության հարաբերակցության անցանկալի փոփոխության և աշխատուժի նկատմամբ հարկային բեռի ավելացման 2) Բնակչության կազմում ահագնացող սեռային անհամաչափությունը, որը հանգեցրել էր ամուսնական տարիքի բնակչության շրջանում գույգ չգտնելու խնդրի: Եթե պատասխանում չեն նշվում բերված հիմնական պատճառները, բայց դրանցից բխող մեկնաբանություններ՝ յուրաքանչյուրի համար շնորհել 0.25միավոր:

10. ա. Մանգրային թփուտները բուսական համակեցություններ են (կամ էկոհամակարգ), որոնք հարմարված են առափնյա պարբերաբար ջրածածկվող տարածքներում աճելուն (**0.5միավոր**): Եթե աշակերտը կարողանում է մեկնաբանել, որ դրանք մասամբ ջրածածկվող բույսերն են ավալի գոտում՝ շնորհել 0.5միավոր:

բ. Դրանց զբաղեցրած տարածքը կրճատվում է կամ ունի նվազման միտում **(0.5միավոր)**

գ. Բազմաթիվ գործառույթներից (կարևորություններից) որպես հիմնականներ կարելի է նշել հետևյալ ցանկից ցանկացած երկուսը **(յուր. 0.5միավոր)**.

1) մանգրային թփուտները կլանում և պահեստավորում են մթնոլորտի ածխաթթու գազը՝ դրանով մեղմում են ջերմոցային էֆեկտը;

2) հսկայական կենսաբազմազանության ապաստարան են, բնադրավայրեր և թեժ կետեր;

3) կանխում են ափային էրոզիան;

4) կանխում են ծովային ջրերի ներթափանցումը ափամերձ գոտի և այդ տարածքների հողերի աղակալումը, ինչպես նաև գրունտային ջրերի աղիության աճը:

5) պահպանում են ջրի որակը, քանի որ կլանում են ջրի կենսածին տարրերը:

Եթե աշակերտը նշում է այլ ինելամիտ, սակայն երկրորդական գործառույթ՝ յուրաքանչյուրի համար շնորհել միայն 0.25միավոր

11. ա. Ժողովրդագրական դիվիդենդը երկրի տնտեսության արագացված աճի երևույթն է, որը հիմնականում պայմանավորված է ծնելիության և մահացության մակարդակների կրճատման արդյունքում բնակչության տարիքային կազմի փոփոխություններով **(0.25միավոր)**: Այն բնորոշ է զարգացող երկրներին **(0.25միավոր)**: Գլխավոր պատճառն այն է, որ զարգացող երկրներում, ի տարբերություն զարգացածների, ծնելիության և մահացության մակարդակները բարձր են, ինչի պատճառով այնտեղ են վարում ծնելիության նվազեցմանը ուղղված ժողովրդագրական քաղաքականություն կամ փորձում են բարելավել առողջապահական համակարգը: Արդյունքում բնակչության կառուցվածքում ավելանում է աշխատունակ բնակչությունը և հնարավորություն ստեղծում արագացված տնտեսական աճի համար **(0.5միավոր)**: Եթե աշակերտը իմաստալից մեկնաբանություն է ներկայացնում աշխատունակ բնակչության թվաքանակի ավելացման ուղղությամբ, սակայն թերություններով, շնորհել 0.25միավոր:

բ. Ազատ տնտեսական գոտին օրենքի ուժով առանձնացված տարածք է, որտեղ տնտեսական գործունեությունը իրականացվում է արտոնյալ պայմաններով **(0.25միավոր)**: Ընդունել նաև իմաստը լիարժեք արտահայտող այլ ձևակերպումները:

Հիմնական առավելություններն են **(յուր. ճիշտ ձևակերպումը՝ 0.25միավոր)**.

1) Ներգրավում են արտասահմանյան կապիտալ;

2) Հաստատում են ավելի սերտ տնտեսական հարաբերություններ կամ ինտեգրվում են միջազգային տնտեսական համակարգին;

3) Բարձրանում է երկրի արտաքին տեսանելիությունը և վարկանիշը

4) Նպաստում է երկրի գործազրկության խնդրի լուծմանը

5) Աշխատելով արտասահմանյան ձեռնարկություններում՝ հիմնող երկրի ռեզիդենտները մեծ փորձ են կուտակում և հետագայում կարող են երկրում տարբեր ուղղություններ զարգացնել

6) Ներդրողները նաև զարգացնում են ենթակառուցվածքներ

12. Ա- 6; Բ- 7; Գ- 1; Դ- 2 (յուր. 0.5 միավոր)